ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 23.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/188

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.12.2019թ. թիվ 26/26-1/19583-2019 գրությամբ «Վարդանյան-շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Ջրային կոմիտեի 21.11.2019թ. թիվ 03/17/5256-19 գրության հիման վրա, 12.12.2019թ. թիվ 26/26-1/19583-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Վարդանյան-շին» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Վարդանյան-շին» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ «Վարդանյան-շին» ՍՊԸ-ի կողմից գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Վարդանյան-շին» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/188 ընթացակարգի շրջանակներում 23.12.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. Ջրային կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

Ջրային կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.11.2019թ. թիվ 03/17/5256-19 գրությամբ հայտնել է, որ Ջրային կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) և «Վարդանյան-շին» ՍՊԸ-ի միջև 29.08.2019թ.-ին կնքված կապալային աշխատանքների կատարման ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով պետական գնման պայմանագրի (հետայսու նաև՝ Պայմանագիր) շրջանակներում Ընկերության կողմից պետք է իրականացվեր Ղազանչի ջրաղբյուրների սանիտարական գոտում նոր, հեղուկ քլորով շահագործվող քլորակայանի կառուցման և Սառնակունք գյուղի մոտ Մուխութուրյանի ջրատարի ջրաքանակի համար քլորակայանի կառուցման աշխատանքները, սակայն Ընկերության կոմից աշխատանքները չեն սկսվել, որի մասին Կոմիտեին տեղեկացրել են աշխատանքների կատարման որակի նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող «Ալտերնատիվ» ՍՊԸ-ն և հեղինակային հսկողություն իրականացնող «Ջինջ» ՍՊԸ-ն: Նշվածի վերաբերյալ Կոմիտեն գրավոր և բանավոր տեղեկացրել է Ընկերությանը:

Պատվիրատուի աշխատակիցների կողմից տեղում ուսումնասիրություններ են կատարվել, որի վերաբերյալ կազմվել է արձանագրություններ:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի ա) ենթակետի պահանջները՝ Կոմիտեն 2019 թվականի հոկտեմբերի 29-ին միակողմանի լուծել է ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով պետական գնման պայմանագիրը: Միաժամանակ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ 08.11.2019թ.

տեղեկագրում հրապարակվել է ծանուցում՝ Պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու հիմքով Պայմանագիրն ամբողջությամբ միակողմանի լուծելու մասին:

Պատվիրատուն նշել է, նաև որ Ընկերությունը պարտավոր է ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 2,810.0 հազ. ՀՀ դրամը որպես տույժ և 653.5 հազ. ՀՀ դրամ տուգանք Պայմանգրի 6.2 և 6.3 կետերի համաձայն, ինչպես նաև վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 13,070.0 հազ. ՀՀ դրամ որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (Պայմանգրի ընդհանուր գումարի 10%-ը):

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/188 ընթացակարգի շրջանակներում 23.12.2019թ. ժամը 10:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/188 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/188 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Ջրային կոմիտեի և «Վարդանյան-շին» ՍՊԸ-ի միջև 29.08.2019 թվականին կնքվել է ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ղազանչի ջրաղբյուրների սանիտարական գոտում նոր, հեղուկ քլորով շահագործվող քլորակայանի կառուցման և Սառնակունք գյուղի մոտ Մուխութուրյանի ջրատարի ջրաքանակի համար քլորակայանի կառուցման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

2. Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից և կատարման ժամկետը սահմանվում է 5 ամիս՝ համաձայն Ղազանչի ջրաղբյուրների սանիտարական գոտում նոր, հեղուկ քլորով շահագործվող քլորակայանի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի և 4 ամիս համաձայն՝ Սառնակունք գյուղի մոտ Մուխութուրյանի ջրատարի ջրաքանակի համար քլորակայանի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

3. «Վարդանյան-շին» ՍՊԸ-ին ուղղված 08.11.2019թ. թիվ 03/5051-19 գրությամբ Ջրային կոմիտեն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4. կետի «ա» պահանջները, Կոմիտեն 29.10.2019թ. միակողմանի լուծում է «ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով պայմանագիրը: Միաժամանակ հայտնելով, որ Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակում է տեղեկագրում:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.12.2019թ. թիվ 26/26-1/19583-2019 գրությունը, Ջրային կոմիտեի 21.11.2019թ. թիվ 03/17/5256-19 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝*** վճարել դրամ, հանձնել գույք, ***կատարել աշխատանք***, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, ***իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը***:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ջրային կոմիտեի և «Վարդանյան-շին» ՍՊԸ-ի միջև 29.08.2019 թվականին կնքվել է ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա ծածկագրով կապալային աշխատանքների կատարման գնման պայմանագիր, որի համաձայն Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով

նախատեսված Ղազանչի ջրաղբյուրների սանիտարական գոտում նոր, հեղուկ քլորով շահագործվող քլորակայանի կառուցման և Սառնակունք գյուղի մոտ Մուխութուրյանի ջրատարի ջրաքանակի համար քլորակայանի կառուցման աշխատանքները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից և կատարման ժամկետը սահմանվում է 5 ամիս՝ համաձայն Ղազանչի ջրաղբյուրների սանիտարական գոտում նոր, հեղուկ քլորով շահագործվող քլորակայանի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի և 4 ամիս համաձայն՝ Սառնակունք գյուղի մոտ Մուխութուրյանի ջրատարի ջրաքանակի համար քլորակայանի կառուցման աշխատանքների նախագծային փաստաթղթերի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Ջրային կոմիտեն 08.10.2019թ. թիվ 03/17/4531 և 18.10.2019թ. թիվ 03/08/4704-19 գրություններով դիմել է Ընկերությանը հայտնելով, որ վերջինիս կողմից մինչ օրս չեն սկսվել Պայմանագրով նախատեսված աշխատանքները, որի մասին Կոմիտեին գրավոր տեղեկացրել են նաև հեղինակային հսկողություն իրականացնող «Ջինջ» ՍՊԸ-ն և որակի նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող «Ալտերնատիվ» ՍՊԸ-ն:

Միաժամանակ տեղեկացնելով, որ եթե Ընկերության կողմից չիրականացվեն Պայմանագրով ստանձնած պարտականությունները, ապա Պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքների համաձայն՝ աշխատանքները Պայմանագրով նախատեսված ժամկետներում, ծավալներով և սահմանված օրացուցային գրաֆիկով չկատարելու դեպքում Պատվիրատուն սահմանված կարգով միակողմանի կլուծի Պայմանագիրը՝ պահանջելով հատուցելու պատճառված վնասները:

Պայմանագրի 3.1.4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) ***<u>Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար</u>***,

բ) Կապալառուն խախտել է Պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կեպանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

Նույն օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:***

Այսպիսով՝ «Վարդանյան-շին» ՍՊԸ-ին ուղղված 08.11.2019թ. թիվ 03/5051-19 գրությամբ Ջրային կոմիտեն հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4. կետի «ա» պահանջները, Կոմիտեն 29.10.2019թ. միակողմանի լուծում է «ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա» ծածկագրով պայմանագիրը: Միաժամանակ հայտնելով, որ Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակում է տեղեկագրում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***<u>մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:</u>***

Հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Վարդանյան-շին» ՍՊԸ-ն թույլ է տվել վերջինիս և Ջրային կոմիտեի միջև 29.08.2019թ. կնքված «ՋԿ-ՀԲՄԱՇՁԲ-19/1-Ա»

պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը: Հետևաբար, գտնում եմ, որ «Վարդանյան-շին» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.12.2019թ. թիվ 26/26-1/19583-2019 գրությամբ «Վարդանյան-շին» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Վարդանյան-շին» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**